



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 47

ՏԵՐԱԲԱՐԹ

19 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ.	Տարեկան 54 ՂԸ.	Տարեկան 42 ՁԲ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՖ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԿԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄՈՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՑՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուղադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՖ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՖ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ թէ՛ Կ. Պոլիս, եւ թէ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գումարացիք պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւ իրարմը պարգեւին արժանացած են:


Հատր 40 փաքա

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒԽԻՆԵԱՆ

(Տ. Աճաճորյան) شرکت مرتبه مطبعه — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ճաշքսի թիւ 52



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
եւ տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՄԱՐԱԿԱՆ
ՄԱՍՆԱԳՐԱՆ

- | | |
|----------------|--|
| ԱՆՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօն Մարչէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱՆԱԹԱ. | (1. Սինկեր խան, Թիւնլի հոսւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊԱԼԱՏ. | (1. Սուլթան համամ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՏԱՐ. | Չարշը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնահիշեր զաւատներու բոլոր ֆաղսֆներու մեջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ
343 կրկին, Տիւզդուլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅԾ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 4860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ



ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագրութիւն եւ Պահեստի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀԻՔԵՂԻ ՃԻՒՂ

Դրամագրութիւն եւ Պահեստի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և
կարասիք:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք
մարդկային կեանքի վրայ:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգե-
նաւի՝ և առագաստանաւի վրայ:

Ընկերութեան գրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան
գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիւզօր Երկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 47

ՇԱԲԱԹ

19 ՆՈՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական նիշեր. — ՅՈՎՀ. Գ. ՊՕԶՄԱՆԱՆ: *Ursahgական նամականի.* — ՄԱԲ-
ՐՈՒՀԻ: Անցորդը (*Բանաստեղծություն*). — ՍՈԿՐԱՏ ՍԱՐՐԱՖԵԱՆ: *Իմ օրագիրս.*
— ՊԷԱԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ: Միամիտի խօսքեր. — ԼԵԻՈՆ ԱԻԱԳԵԱՆ: Բարեք. —
ՆԵՐՇԱՊՈՒՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ: Առեղծուած (*Ոսանաւոր*). — ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ:
Մայրիկիս պատկերը (*Թարգ.*). — ԵՐ. Մ. ՃԻԻՀԷՐԵԱՆ: *Հօքսառիս բիանֆօ.* — ՎԱ-
ՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Խոհարարական ֆրոնիկ. — ՍՐԲՈՒՀԻ ՊԷՕՅԻԻՔԵԱՆ: Շաք-
քուան լուրեր:

ԳՐԱԿԱՆ ՆԻՇԵՐ

Կը խորհիմ թէ՛ Կեանքի մէջ բարիք ընելուն չափ ու ապահովաբար ա-
ւելի բարձր առաքինութիւն մ'է չարիքին դէմ մաքառելը: Բարի ըլլալը, չա-
րութիւն չընելը ամէնքին պարտքն է արդէն ու պարտականութեան մը կա-
տարումը բնական բան մըն է: Մարդերու յաջողութիւնն ու վստահութիւնն
է որ բնական գործողութեան մը կատարումին մէջ առաքինութիւն մը կը
տեսնէ: Չարիքին դէմ մաքառելն է ճշմարիտ առաքինութիւնը, քանի որ
անիկայ կը պահանջէ զոհողութիւն:

Մեր լրագրութիւնը բարեբաղդաբար իր օրուան կատարելութեանը մէջ,
անկեղծ փափաքն ունի ժողովուրդին օգտակար ըլլալու, բայց եթէ այս ուղ-
ղութեամբ միշտ ընթանայ, ոչ միայն բարեքը մեծ պիտի ըլլայ, այլ և պիտի
սկսի նոյնիսկ դպրոց մը հանդիսանալ: Մեր մէջ ժողովրդական կրթութեան
հրաշալի աշխատութիւնը կատարողը, լրագրութիւնը պէտք է ըլլայ: Եւ
սակայն իր ստանձնած այդ նուիրական դերը օգտակարապէս չ'իրարկեր:


Պոլսահայ գրական մտքին բոլոր բովանդակ թեթեւութիւնն ու անբաւականութիւնը, յարգելով միշտ բացառութիւնները, իր կարգին, գաւառներու իմացականութիւնը մասամբ ապականելու վրայ է: Ի՞նչ տրուած է ու կը տրուի, դիտել, ուսումնասիրել ու արտագրել սորվեցնելու համար գաւառացի տղուն՝ որուն մէջ կ'երգէ թերեւս ապագայ տաղանդին կամ հանճարին ձայնը: Իրենց արուեստագիտական զարգացումը պատրաստող ու փութացնող հեղինակները բնագրին մէջ կարգալու անկարող են:

Ու մեր լեզուով անոնց թարգմանութիւնները չկան. որով ստիպուած կ'ըլլան կեղծին փնասակարին ու տգեղին դիմելու: Անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ կարգ մը թարգմանութիւններ՝ մեր նոր սերունդին արուեստագիտական զարգացումը պատրաստող: Գաւառի ու նոյնիսկ Պոլսոյ նոր սերնդեան մեծ մասը չի կրնար օտար հեղինակը իր բնագրին մէջ մարսել: Միջոցներ ընձեռնելու է մեր տարած լաւագոյն մտքերուն արտագրութիւնները վայելելու և անոնցմով ապրելու համար: Մտածման ու կեանքի ձախող ձեւով մը, գեղեցկութիւնն ու ճշմարտութիւնը մտքերու վրայ դրոշմել փորձելու է: Գրականութեան արդի ձեռնհաս մշակները միահամուռ աշխատելու են իրենց ձեռքի տակ ունեցած միջոցներով տոգորել նոր սերունդը գրական կատարելագործեալ միտքով: Ասոր համար, կրնանք ֆրանսերէն ճաշակը ընտրել որ նուիրագործողն է բոլոր օտար հանճարներուն: Ընդունելով միանգամ ընդմիշտ թէ առանց ու է օտար լեզուի գիտութեան այսուհետեւ գրութուար է գրագէտ ըլլալ, և ենթագրելով թէ գաւառացիներէն անոնք որ գրականութեան պիտի նուիրուէին, գէթ ֆրանսերէն մը գիտեն. անոնց չիտակ ճամբան ցոյց տալու, և մատնացոյց ընելու են այն հեղինակները՝ զոր պէտք է կարգան և ուսումնասիրեն, ու նոր մտքին մտերմութեան մէջ զանոնք ապրեցնեն: Այսպէսով վաղուան սերունդին կռնակէն պիտի սկըթուի կեղծ գրականութեան չապիկը և օտարէն առնելով ինչ որ ունի անիկայ ճշմարտապէս գեղեցիկ, օգտակար և կազդուրիչ, վաղուան գրականութիւնը իր բարգաւաճումին իսկական տարրերը ինքնիրմէն պիտի հայթայթէ:

Այսպէսով գաւառացի գրագիրը՝ որ այսօր ճղճիմ ու տարտամ գաղափարներով տոգորուած է, երբ օտար գրականութեան հետեւի ու որդեգրէ այդ կատարելագործուած ճիւղը այն ատեն միայն պիտի կրնայ հասնիլ այն կետին որ գրական զենիթը կ'անուանի:

Միշտ կարգալ, միշտ գործել, թարգմանել ու հետեւիլ լաւ գրողներու գործերուն. ահա սպասուածը, ահա ճամբան:

ՅՈՎՀ. Գ. ՊՕԶՄԱԵԱՆ



ՄՐՏԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ազնիւ ընկերուհիս

Օր. Թագուհի,

Նամակիս պատասխանը չառի, միջոց չես ունեցած գուցէ գրելու կամ թղթատարական յապաղում մը եղած է:

Ներքին բնագոյ մը ինձ կը խօսի նամակըս առնելէ, ուրեմն երկտող մըն ալ երկրորդելու, լոկ քեզ զրօսցնելու եւ գրադեցնելով՝ հիւանդի մը անկողնին քովը ծանրացող դանդաղ ժամերուն լեղիութիւնը մոռցնելու համար: Պիտի շարունակեմ գրել, սակայն խօստացիր թէ՛ երբ նամակս առնես, եթէ երկու ձեռքդ կրակին մէջ ալ ըլլայ, անպատճառ պատասխանես: Երիտասարդ հոգիս քու ուշիմ յորդորներուդ կը կարօտի:

Այսօր Տիկին Գլխանի հետ գլուխ գըլուխի խօսակցութիւն մը ունեցանք, խեղճ կինը շարունակեց պատմել իր գլուխն անցած գացածը, զորս խոստացեր էի քեզ հաղորդել:

— Քսան երկու տարեկան հասակիս մէջ, շարունակեց խեղճ կինը, տխրութեամբ ինծի նայելով այս անգամ, քսան երկու տարեկան դեռ մատաղ հասակիս մէջ՝ անխիղճ մէկու մը հաճոյքին ու վայելքին առարկայ եղած էի, ի՞նչ ընելու էր, անգամ մը սիրած էի եւ գերի եղած:

Ո՛րքան դժուար է եղեր ընտանիքէ, մանաւանդ խնամող մօրմէ մը զուրկ ըլլալը, անոր խրատող ու մայրական խորհուրդներէն, անոր պահպանող ու գերբնական ձեռքերէն զստուելը եւ որքան անտանելի: Քոյրս, ըսաւ, խօսքը ինծի ուղղելով, դուն դեռ անփորձ ես, դուք հիմա չէք գիտեր ձեր մօրը յարգն ու փառքը... բայց, ետքը՝ կ'ըմբռնէք, կ'զգաք ու կը փնտռէք զայն: Սիրեցէ՛ք, գիտցէ՛ք ու յարգեցէ՛ք ձեր մայրերը, որովհետեւ այդ աստուածառաք կիները որոնք ձեզ կը խնամեն ձեր մանկութեան օրերուն, սուրբ են, եւ անոնց հալ ու մաշ վիճակը իրենց հոգեհատորին համար՝ անզուգական ու անսահմանելի: Անոնք են այն սկզբնական տարրը որ զմեզ կերակրեցին վառարանի մը շուրջը, այն վառարանին

չուրջը որ ընտանիք կը կոչուի, եւ ուր մանուկ ու մատաղ հոգին՝ կ'աճի, կը սնանի: Ի՛նչ քաղցր կեանք է հո՛ն, ընտանիքին մէջ, պզտիկին վայելած կեանքը: Երանի թէ իմ կեանքս մանկութեամբ անցնէր, եւ ես ըմբռնէի այդ անուշութիւնները լիովին: Բայց աւա՛ղ, ժամանակը կը սահի շուտով, մեզ քայլ մըն ալ դէպ ի գերեզման քշելով, ուր մեր խաղաղ ու յաւիտենական հանգիստը պիտի գտնանք:

— Վերջապէս, չերկարենք, աւելցուց Գլխանս՝ ուշադրութեամբ զինք մօտիկ ընելէս քաջալերուած, իրերու այս վիճակին մէջ, տարիներու ստուար հոլովումէ մը ետք, օր մը տկար գտայ ինքզինքս: ... Գիշերելէ... մը քանի մը օր վերջը, թուլ տկարութիւն մը զգացի վրաս, կարեւորութիւն չտուի, սակայն չեղաւ: Երբեմն երբեմն սոսկալի խիթեր, ցաւեր կ'ունենայ. արդեօք... ա՛հ... սոսկալի՛ բան...: Ի՞նչպէս ըսեմ, ի՞նչպէս պատմեմ քեզի հիմա՝ չեմ գիտեր...: Վերջապէս անբուժելի ու մահացու տարափոխիկ հիւանդութիւն մը փոխանցուած էր այդ հրէշ մարդէն ինծի...: Նախ, բաւական ժամանակ չկրցայ հասկնալ, ու անորոշ վիճակի մը մէջ տատամսած մնացի, մինչեւ որ այդ պժգալի ախտը աղէկ մը տարածուեցաւ չորս դիս ու զիս լկեց, փճացուց անխնայ: Ի՞նչ ընէի, ի՛նչ կուգար ձեռքէս: Ո՛ւր որ դիմէի, ի՛նչ որ ընէի, իմ պատիւիս պիտի ընէի: Թէպէտեւ իմ անփորձութեանս ու սեւ ճակատագիրիս պիտի վերագրէին այս ամէնը զիս մօտէն ճանչցողները, սակայն դարձեալ կ'երկմտէի ու յետս կ'ընկրկէի:

Իրեն իսկ չէի յայտնած թէ՛ իր երեսէն չարատանջ կերպով կը հարուածուիմ. ան արդէն երեսս իսկ չէր նայէր, երբ գիշերը ուշ ատեն գինով տուն կուգար, ի՛նչպէս պիտի հասկնար, պիտի զգար իմ ցաւերս, իմ տանջանքներս: Անզգային մէկն էր ինք արդէն: Քոյրս, ի՛նչպէս կ'ընեն չեմ հասկընար, չիտակը ցաւալի է կիներուն վիճակը, միշտ լռելու դատապարտուած են անոնք, միշտ...: Բայց եւ այնպէս, անհանդուրժելի են այս պարագաները, այս աղտեղութիւնները, զորս էրիկմարդը կը

բերէ տանը սեմէն ներս, որոնց՝ կինն ալ կը մասնակցի անգիտակցաբար... Անմեղ-նե՛րը... Ոճրագործնե՛րը... Անխղճա-բար չեն բաւականանար իրենց սահմանուած վայելքներէն, ըմբոշխումներէն, եւ կ'երթան կը նետուին անոնց գիրկը, որոնք օր մը ան-չուշտ իրենց վիզին մեղքովը պիտի տանջեն, պիտի չարչրկեն անմեղ մը: Անզգամներ... Ա՛հ, ի՞նչպէս բռնեմ ինքզինքս, ի՞նչպէս զայրոյթս զսպեմ անոր հանդէպ, որ զիս այս վիճակիս մէջ դրաւ: Բայց ի՞նչ ըսեմ իմ անփորձ ու երիտասարդ հոգիիս, որ անգամ մը յափշտակուած էր իրմով:

Իմ այս տատանեալ ու դժբաղդ վիճակս, որ իր երեսէն էր, լուռ ու դառնազին, ուսերուս վրայ բեռացած, իբրեւ խաչը քրիս-տոնեային, կը տանէի, կը կրէի՝...

Ու, այդ ծանր տանջանքներուն տակ թէպէտեւ ընկճուած, անզգայացած, բայց դեռ կը սիրէի զայն եւ կը հպատակէի իրեն, կնոջ յատուկ լուռ ու հեզ բնաւորութիւնով: Գուցէ հիմա զիս կ'այսպանէք, բայց ի՞նչ ը-նեմ, ստե՛մ, ուրիշ տեսակ բանե՛ր յօրինեմ: Չէ՛...:

Սէրը կոյր է, կ'ըսեն, իրաւունք ունին:

Իմ մահս այդ ախտէն պիտի ըլլար, գի-տէի: Եւ օրէ օր, ազատելու համար այդ անխիղճին ձեռքէն՝ մօտալուտ վախճանի մը կը սպասէի, բայց և տարեկան պզտիկ որ-բուկ մը կար, ի՞նչ պիտի ըլլար անոր վի-ճակը՝ երբ ինձմէ զրկուէր, աղէկ գիտէի որ այդ անխիղճը տունը տեղն ու տղեկը ձգե-լով գլուխը պիտի առնէր ու քալէր: Ընտա-նեզրկութեան ու անոքութեան դառնու-թիւնները գիտէի, ի՞նչպէս կրնայի ձգել այդ որբուկը, պզտիկ ու մէկ հատիկ սիրա-կանս՝ որ փողոցի տղայ պիտի ըլլար ան-չուշտ: Արդէն այդ հրէշ մարդուն երեսէն դուռ դրացի ծուռ աչքով կը նայէին ինծի, եւ անոնցմէ օգնութիւն սպասելու յոյսն ալ մեռած էր սրտիս մէջ: Կեանքս անցած էի ու պժգացած, բայց պզտիկ մը կար ոտքս կա-պող, ու իմ բոլոր տառապանքներս մոռցնող հրեշտակ մը կար, որ թեւերուս առարկան էր ամէն օր: Զիշդ քրոջս կը նմանէր, շատ կը սիրէի զանիկա: Եւ երեւակայելու է թէ այդ որբուկը ինծի յանձնուած էր տունով,

ու տեղով, խնամուելու, կերակրուելու հա-մար, ես այդ ամէնքին միտուելուն ու փը-ճանալուն պատճառ եղած էի, ի՞նչպէս կըր-նայի ազատիլ խղճիս ձայնէն գերեզմանիս մէջ իսկ, ուր անմեղ տղեկին ուրուանկարը պիտի գար խռովել իմ հանգիստս, անտա-րակոյս...:

Ուրեմն պէտք էր որ ապրէի, ապրեցնե-լու համար հոգեհատորիկը, որ ինծի ձգուած էր ապրելու ու սնելու համար: Այսպէս յու-սահատ, կ'ըսպասէ իրերու վերջաւորութեան, որ չուշացաւ, սակայն տարբեր կերպով մը: Այս կէտն ալ պատմեմ, որ իմ կեանքիս վերջաբանն է, եւ լմնցնեմ, արդէն ուշ մը-նացի, մութը կոխեց, հիմա սանս՝ Հանրին եկած է մի գուցէ ու ինծի կ'ըսպասէ:

... Այս անգամ այսչափ...:

Բերա

ՄԱՔՐՈՒՀԻ

Ա Ն Յ Ո Ր Պ

Դառն եւ եղեր վերջաբանը մեր սերին՝ Լեդիի պէս, արցունքի պէս դառն՝ շա՛ս դառն, եւ չեմ գիտեր քե արդ ինչո՞ւ սեւեռիմ Այլերս դէպ ի անհուքեան, անդասան:

Ես կը պժգա՛մ... ո՛հ, կը գանիմ ֆեկե աշ, Բայց ինչո՞ւ զիս կ'ուզես յաճախ համբուրել, ինչո՞ւ կ'ուզես քեւերուս մէջ գիւնովնալ, եւ, ո՛հ, ինչո՞ւ շոյել մազերս քելումէլ:

Չե՛ս գիտեր քե ֆեզի մոռնալ կ'ուզեմ ես, Դեռ չի՞ քսուեր ոտքա՛ն որ զիս հասցուցիր, Այ չե՛մ ուզեր լիկի աղբիկ ֆեզի պէս, Չե՛, չե՛մ ուզեր, հոգիս ըրիր ցանուցիր:

Գիտե՛ս առաջ, երբոր ցայի ֆեզի մօս, եւ ուզեի սիրել, շոյել, զգուել ֆեզ, Դուռն ալ յաճախ կը փախչէի՛ր, անամօ՛ք, Հիւնս ինչո՞ւ զգուել, սիրել դու կ'ուզես:

Հիւնս, ո՛վ կոյս, եւ ո՛վ աղբիկ սիրաւատ, Քանի՛ հեռու փախչիմ ֆեկե ու դողամ, Այնքան ալ դուռն կը մօտեանս ինձ իսպառ, Ու գրգիռով կ'ուզես շոյել ֆաղցրահամ:

Բայց գիտցիր քե պիտի մոռնամ ես ֆեզի, Պիտի մոռնա՛մ, անցորդիկն պէս անհետանալ... Բռնիմ ծուղակիդ մէջ սեւազեմ... Ցանցուած եւ... ես ակամայ, լուռ ու մոռնեմ...

ՍՈՎԱՏ ՍԱՐԴԱՅԵԱՆ

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

~~~~~

## ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

A la bonheur !

Հակաբօլական մրցանակը, որուն չորս աչքով եւ չորս ոտքով սպասողներու թիւը մատի վրայ չէր որ կը համրուէր, իր օրօրանը հասաւ :

Նիւթեր կան, որոնք մեզ էգ գրողներուս չեն պատշաճիր, այս կարգէն էր նաեւ հակաբօլական մրցումը :

Ինչո՞ւ չի գրեցինք . . . :

Որովհետեւ մենք կիներս խնայներ չենք, պիտի պատասխանեն ամէն անոնք՝ որոնք օղին առանց ջուրի կուլ կուտան, եւ պիտայի գաւաթին մէջ ֆօնեաֆ կը լեցնեն զըլուխ բռնելու համար, որպէս զի իրենք ալ վերջէն իրենց ամուսիններու զըլուխ բռնեն :

Գրաւ կը դնեմ որ՝ եթէ գրագիր քոյրերէս մէկը համարձակէր յօդուած մը հիւսել այս կարեւորագոյն (.) նիւթին վրայ, Տիար Թաւաճեան երկու անգիացի ալ անոր պիտի յատկացնէր . . . պայմանաւ որ այդ ֆիւ մի ֆուրի ահոտ յօդուածը կրկին տըպագրուէր :

## ԵՐԵՒՇԱԲԹԻ

Այն օրէն, երբ քիչ շատ գրիչը կաղամարին հասցնողները (փոխան ձեռքը բերնին հասցնող ասացուածին) սկսան օրագրութիւնը իրը նորոյթ քել թերթ ըսուած փուռը, կարծես վաճառականներու ահագին օրագրութիւնները կաղալ սկսան : Այս օր բոլոր վաճառականի գրագիրները որոնք շատ ու չինչ բացառութեամբ մը գրագէտի հովեր կը փչեն, այնքան սէր տուին օրագրի ընթերցման, որչափ չպիտի տային, 500 ոսկի տըրամագիր ունեցող օրիորդի մը :

Այս իրողութիւնը կռահող թերթի բանիւրուն վարիչներ՝ սկսան իրենց սիւնակները քանալ օրագրողներու առջեւ, եւ այսպէսով մեր օրուան գրականութիւնը օրագրի գրականութեան նոր դարազուլս մը սկսաւ : Բայց զարմանալին հո՞ն է որ՝ մինչ Տնօրէններ, ընթերցող հասարակութեան օրագիր

հրամցներով՝ Մեծ զոհողութիւն մը ըրած, անստգիւտ զբօսանք մը հնարած կը համարին, ճշմարտութիւնը սա է որ անդին, այստեսակ նեւնիները կարգացող հասարակութիւնը պատշաճ (.) բօմբիմաններով կը վերաբերուի ատոնց ու մշիկ մշիկ կը քնանայ : Օրինակ՝ իմ օրագիրս :

## ԶՈՐԵՔԵԱԲԹԻ

Ստեղծագործութեան մէջ տգեղ բան չիկայ կ'ըսեն, եւ ահա այս ճշմարտութենէն քաջալերուած, ամէն ոք հայելին կը նայի եւ ինքզինքին վրայ կը գտնէ այն առաւելութիւնները, որոնք մասամբ կը մխիթարեն ենթական :

Ինքնագովութիւնը չապիկ մըն է որ ամէնքս ալ կը դործածենք, ամէնուս ալ կը յարմարի, ճիշդ եկեղեցական չապիկներուն պէս, որ հասնողը կռնակը կ'անցնէ :

Այսպէս, օրուան թերթերն ալ սկսած են հայելին նայելով՝ ինքզինքնուն վրայ առաւելութիւններ նշմարել, ուրկէ ծագում կ'առնէ ինքնագովութիւնը : Բացէք ո՛ր եւ է օրագրութիւն կամ հանդէս, հոն պիտի տեսնէք նոյն իսկ թերթին անունը, որ մէկ էջին մէջ երեք չորս անգամ յիշուած պիտի ըլլայ անպատշաճ, այնպէս որ մէկ թիւը պիտի ունենայ  $24 \times 4 = 96$  յիշատակութիւն :

Եւ որովհետեւ օրինակով բացատրելը աւելի համոզիչ է, ուստի փորձենք :

Հանրագիտակի մշակած զուարթ ճիւղը, որ իր օգտակարութիւնները ունի . . . եւլն :

Հանրագիտակ՝ արդէն ասկէ մէկ քանի թիւ առաջ խօսած էր այս նիւթին վերայ . . . եւլն :

Հանրագիտակի հասած նամակները մեզ կը քաջալերեն, որով . . . եւլն :

Հանրագիտակ, զուարթ հանդէսը գնահատուելով բազմաթիւ ընթերցողներու կողմէ . . . եւլն :

Հանրագիտակ, պիտի հրատարակէ նաեւ մանկապարտէզի տղոց շարադրութիւնները, քաջալերութիւն՝ ապագայ սերունդին . . . եւլն :

Հանրագիտակ, պիտի փորձէ տղամայրութիւնը ուսուցանել իր ընթերցողներուն, որպէս զի . . . եւլն :

Հանրագիտակ, կը խոստանայ բէլլուինի, չապիկի մօտէններով զարդարել իր սիւնակները, որոնցմով . . . եւլն:

Ինչ ծուրիկ ռեֆլաւ . . . փոխանակ ձգելու որ թերթը իր խնամոտ պարունակութեամբը ուրիշներէ լսէ իր գրածները . . . : Ռէֆլամի գրականութիւն, pas à dire !

#### ՀԻՆԳԵԱԲԹԻ

Անկեղծ բարեկամութիւնը, ռասիօնին պէս rare բան մը եղաւ ալ գրականութեան եւ կամ ընկերութեան մէջ: Կեղծիքի դիմակը, ցաւալի է ըսել որ մեր ամէնուս դէմքին վրայ է միշտ: Այսօրուան բարեկամութիւնը, վաղը ոգիի պէս կը ցնդի: Եւ ինչո՞ւ:

Մէկուն հետ ծանօթանալու բաղդը կ'ունենաս, ծանօթութիւնդ քիչ ատենէն բարեկամութեան կը փոխուի, եւ ժամանակին ընթացքին մէջ մտերմութեան կը յանգի: Ահա մտերմութիւն ըսուած չապիկը, երբ կռնակդ անցունես, վախցիր . . . ատելութիւնը, թշնամանքը շուտ պիտի հասնին եւ պիտի զղջաս, ոչ թէ մտերմանալուդ, ա՛յլ, ծանօթանալուդ համար:

Մենք, կանայքս, ուրախ ենք յայտարարելու թէ, աւելի նախանձախնդիր ենք այս մասին, քան մեր հակառակ սեռը, եւ միութարական է մեզ տեսնել թէ, էրիկ մարդոց մէջ բարեկամութեան կեղծիքը աւելի արմատացած է քան թէ մեր:

Et pourtant nous sommes des femmes !

#### ՈՒՐԱԲԹ

Շատ անգամ, երբ խօսքը բարոյականին վրայ դառնայ, ծնողք՝ բոֆէսէօններ կը կտրին, եւ պարծանօք կը յիշեն թէ՛ իրենք, երբէք տեղի չեն տար:

Բարոյականը, որ էն փնտռուած առաւելութիւնն է չափահաս օրիորդներու մասին, մեր մէջ սա սխալ համոզումը կայ թէ, երբ աղջիկ մը զրկուի անոր ասոր ընկերութենէն, փրկուած կ'ըլլայ, եւ ահա ասոր համար է որ ծնողքներէն շատեր, բէշերնուն կը կապեն իրենց հասուկները: Բայց անդին բնաւ չեն խորհիր բարոյականին մեծ թըշնամիին վրայ, օտար հատորներու ընթերցանութեան վրայ ըսել կ'ուզեմ, որ լռիկ

մեջիկ կը թունաւորէ, կ'ապականէ ընթերցողը:

«Աղջիկս դուրս ելլալու մօտ չէ, արդուզարդի ալ այնչափ հոգ չունի, մենք դուրս կելանք, անիկայ գիրքը կ'առնէ կը նստի . . .» կ'ըսեն ու կը պարծենան, մինչդեռ այդ առանձին ընթերցանութիւնը մտաքս պլուզէն, եւ բացօդեայ բոսմնասէն շատ աւելի հետաքրքրական է օրիորդին համար:

Աւելի լաւ է օրիորդները թողուլ որ բընութիւնը վայելեն բաց օդին, քան թէ ձգեւ զանոնք չորս պատին մէջ առանձին:

#### ՇԱԲԱԹ

Հանրագիտակի նախորդ թիւին մէջ Ազն. Տիկին Բերուզ Զատիկեան, կը գանգատէր թէ՛ կիները միշտ կը դատափետուին, կը քաջըռնին ու պատճառ կը նկատուին այրմարդուն բոլոր անտեղի գործառնութեանց մէջ:

Թարգելի Տիկինը իրաւունք ունէ՞ր թէ ոչ, այդ չէ խնդիրը, բայց պէտք է գիտնալ որ մեր մէջ շատ քիչ բացառութեամբ, ոչ կատարեալ կին ունինք ոչ ալ կատարեալագոյն ամուսին:

Ասիկայ ցաւով կը յիշատակեմ հոս, եւ կը յուսամ թէ համամիտ կը գտնուիք ինձ, երբ ըսեմ թէ՛ պատճառը թերի կրթութիւնն է:


Որչափ բնութիւնները անյարմար ըլլան իրարու, կրթութիւնը, կրնայ թռէ-տիւնեօնի դերը կատարել ամէն պարագայի մէջ, բայց երբ երկու հակառակ եզրերը օժտուած չըլլան այդ առաւելութիւնով, այն ատեն, աւմենաոչինչ պատճառ մը առիթ պիտի տայ ընտանեկան բանավէճերու:

Կ'ընդունի՞ք Տիկին թէ կրթութիւնը մայրըն է երջանկութեան:

#### ԿԻՐԱԿԻ

Ահա շարթուան էն յարմար օրը, յորում մարդ պէտք է ինքն իրմով զբաղի: Վեց օր ուրիշին համար կիրակին՝ pour soi !

ՊԵԱԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ



## ՄԻԱՄԻՏԻ ԽՕՍՔԵՐ

## ԱԿԱՄԱՅ ՓՈՐՁԱՆՔ

Բարեկամներ ու մտերիմներ ունի՞ք, եւ կամ ունեցա՞ծ էք եւրէք ձեր կեանքի ընթացքին մէջ:

Բայց ինքնին զարմանալի ու քիչ մըն ալ տարօրինակ պիտի չ'ըլլա՞ր այդ տեսակ հարցում մը, որ ապահովաբար ո՛չ նուազ ծիծաղի ու կոկորդալի քրքիջներու ծնունդ պիտի տար իր իսկապէս միամիտի հանգամանքովը:

Մա՛րդ էք վերջապէս, եւ ընկերական մարդ էք, եւ անշուշտ ձեր ընկերութեան մէջ ապրելու հանգամանքովը պիտի մղուիք անտեղիտալիօրէն ծանօթներ ու մտերիմներ որոնել ձեր չորս դին, ըլլա՛յ շուկայի հրապարակին վրայ, ըլլա՛յ ընկերական շրջանակի մէջ:

Ասիկայ պէտք մըն է այսօր, բացարձակ անհրաժեշտութիւն մը ո՛ր եւ է մէկու մը համար. այլապէս պիտի կրնայի՞ք բազմամարդկեղորոնի մը կամ քաղաքի մը մէջ, ապրելու ձեր գոհունակ ինքնագիտակցութիւնը ապացուցանել ասկէ՛ աւելի կարկառուն, համոզի՛չ պատճառներով մը:

Բայց մի եւ նոյն ատեն ընդունի՛նք նաեւ որ քիչ մը քիչ անպատեհութիւններ, նուազ անախորժելիութիւններ ալ չէ՛ որ կը բերէ յաճախ նմանօրինակ մտերիմներու ընկերակցութիւնը կամ անոնց ծանօթանալը ո՛ր եւ է պարագայի մը մէջ, անտանելի կացութեան մը մէջ ձգելով քեզ շատ անգամներ:

Ասիկայ իրողութիւն մըն է այսօր, ինքնին չա՛տ յայտնի ու որոշ ճշմարտութիւն մը, որուն հաստատութիւնը ապահովաբար մեծամեծ յոգնութիւններու եւ կնճալից խոչընդոտներու չի՛ կարօտիր, գո՛նէ ինձ համար:

Կ'ըլլայ որ օրին մէկը շուկայ ելլես, ո՛ր եւ է առանին գնում մը կատարելու համար, եւ ահա՛ չորս կողմէն ծանօթներդ ու մտերիմներդ կը շրջապատեն քեզ, որոնց բազմաթիւ առաջարկութիւններուն ականջ չդնել, չպատասխանել՝ ամէն անհատի տրուած

յատկութիւն մը չէ՛ անշուշտ եւ ակամայ կ'ըստիպուիս բարեկամէդ ընելու գնումը:

Ենթադրենք թէ պառակտ է առնելիք. առանց երկար բարակ սակարկութիւններու մէջ մխրճուելու՝ կը հարցնես գինը. կանգունը Յ զրոյ կը պատասխանէ, եւ նկատելով որ քեզմէ աւելի չ'առներ ան, որ բարեկամդ է, դուն ալ վեհանձնօրէն խաբրը չ'կոտրելու համար կը համակերպիս իր առաջարկին եւ գրամները ցնծալով կ'առնես գործիդ կ'երթաս գոհունակ, չխաբուածի հանդարտ երեւոյթով:

Եւ քանի մը շաբաթներ յետոյ միայն կը զգաս, որ խաբուած ես քու առեւտուրիդ մէջ, քանի որ մի՛ եւ նոյն ապրանքը անկէ աւելի՛ աժան գնով պիտի կրնայիր առնել ուրիշ մը, անծանօթ մը, որուն ապրանքները այդ պահուն տարբեր հմայք մը ունին քեզի համար, եւ գերազանց կը թուին աժանէ՛ն աւելի:

Է՛հ, ի՞նչ կրնաս ընել, ակամայ փորձանք:

Իրիկուն մը շուկայէն դարձիդ ծանօթի մը կը հանդիպիս ճամբուդ վրայ, եւ որովհետեւ պէտք է ընդունուած սովորութիւնները յարգել, հետեւիլ անոնց, կ'ստիպուիս անոր ընկերակցիլ, բարեկամդ Գում-գարուցի է եւ դուն՝ Սամաթիացի, ժամացոյցիդ կը նայիս անգամ մը ճշդելու համար ժամանակը, տասը վայրկեան մնացած է կառախումբին, բայց ի՞նչ կրնաս ընել համակերպելէ աւելի. հարկ է կամաց կամաց քալել, շնորհալի հարսի մը յամբընթաց գնացքով, հոգ չէ՛ թէ ուշ մնալու երկիւղը, կառախումբին չ'կրնալ հասնելու վախը լկէ, տանջէ քեզ ներքնապէս:

Եւ կ'ուզե՞ս որ՝ այս ամէնքէն ետք խեղկատակութիւնը ամբողջ ըլլալու համար, ընկերակից բարեկամդ ճամբան ուրիշ իրենց ծանօթի մը դուռը ափ առնէ նոյն պահուն, մի եւ նոյն ատեն ալ խնդրելով քեզմէ որ քիչ մը սպասես իրեն, իր կարեւոր ըսելիքը ամբողջացնելու համար:

Ու կը սպասես. հինգ վայրկեան, տասը վայրկեան, եւ յետոյ բարեկամդ ամբողջացնելով իր կարեւոր ըսելիքը, կը վերադառնայ նորէն դէպ ի քեզ, ընկերակցելու համար:

Քիչ ետք, բարեկամէդ բաժնուերով կը հասնիս կայարան, բայց ... կառախումբը փախցուցեր էս, եւ զարմանալին ալ հո՛ն է ամէնէն աւելի որ՝ յաջորդով ալ չպիտի կըրնաս երթալ, որ եփսոսես է:

Է՛հ, ուրեմն, նոյ նահապետի համբերութիւնը ունենալու է այդ պահուն ընդերկար սպասելու համար, կէս ժամ, երեք քառորդ ժամ, եւ վերջապէ՛ս մէկ մըն ալ կը նետուիս կառախումբ, եւ ժամը երկուքին մօտ կը ժամանես տուն, ուր վստահապէս պիտի կրնայիր շատ աւելի կանուխ երթալ, եթէ սա՛ անիծեալ բարեկամդ այդ իրիկունը ճամբան քեզի չի պատահէր անակընկալօրէն, անախորժ իրողութեան մը ծընունդ տալու համար:


Ակամայ՝ փորձանք:

Եւ յետոյ, հա՛րկ կայ տակաւին երկարելու շարքը ասոնց, որոնք կրնան ա՛յնքան բազմաթիւ, զարմանազան ըլլալ, ո՛րքան այդ մասին անհրաժեշտ պէտք մը մնայ անոնց:

Առանց բացառութեան, ամէն անհատ ալ, ինծի, քեզի պէս կրնայ ենթարկուիլ նմանօրինակ անախորժութիւններու, եւ ապիկայ գրեթէ միշտ, ամէն օր, ամէն վայրկեան:

Ակամայ՝ փորձանք:

ԼԵՒՈՆ ԱՒԱԿԵԱՆ



#### Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ռուսնուզ — Զ. Ա. էֆ. — Պակասութիւնը պիտի զրկուի, հաճեցէք մէկ տաբեկան բաժնեգինը զրկել մեզ:

Քեօքահեա — Յ. Ն. ֆ. էֆ. — Զեր պայմանաժամը կը լրանայ այս թիւով, հաճեցէք նորեն բաժնեգինը զրկել:

Մերսին — (Գործակալութիւն) Ն. Զ. էֆ. իի եւ Յ. Վ. էֆ. (Ատանա) — Բաժնեգինները հաճեցէք զրկել ընդ փոյթ:

Տեւեհ-Մասեհ — Մ. Պ. էֆ. — Զեր պայմանաժամը լրացած է նոյ. 1ին, դրամը զրկեցէք որ շարունակենք:

#### “ Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս Պ Ա Տ Կ Ե Ր Ը ”

Գիւղացի կիներ կը յառաջանար քառուս-ֆին մեջեհ, խոշոր կողով մը անցուցած կոնակը, որուն ծանրութեան տակ կիւս, ու արեւին ջերմութենէն խոնջած, ֆրսիկի կաթիլներ կը սրբէր, որոնք ճակտէն միկնէ ֆրին ծայրը զիկզակ ճամբորդութիւն մը ընելէ վերջ պոս պոս գետին կ'իյնային ու կը կորսուէին փոշիներուն մէջ: Գեղջկուհին կը մտածէր քե իրեն պէս շատ կիներ հանգիստ կապրէին, առանց ասանկ սանցանքներու պէս ունենալու: Կողովին մէջ հաւկիթներ ու ֆանի մը կապ բանջարեղեններ միայն ունէր, որոնք հազիւ աշիւրի մը դրամ պիտի հայրայթէին, բայց ինք սակաւին շատ մը բաներու պէս ունէր:

Այսօրինակ մտածումներով պաշարուած կը յառաջանար սակաւին միօրինակ խշրտալին մէջ քաղելով իր հեփերը, երբ յանկարծ ձիաւոր մը ելաւ իր առջեւ:

— Կողովիդ մէջ ինչ ունիս, հարցուց ձիաւորը գոյքով խառնուած շեշտով մը:

Բանի մը կապ բանջարեղեն ու հաւկիթներ:

— Հաւկիթներ, ա՛, շաւ հանդիպեցայ, ֆանի օրումն եմ:

— Թարմ եմ քարմ, դեռ այսօր ժողվեցի:

— Լաւ շաւ, գործիս կուգայ: Փոխարէն մայրիկիս պատկերը պիտի տամ քեզի:

— Սակայն ես ի՞նչ ընեմ մայրիկիդ պատկերը, ինծի դրամ պէտք է աղֆատ եմ:

— Համակերպե, չես կորսնցներ:

— Թող այնպէս ըլլայ պատուաւոր երեսասարդի մը երեւոյթը ունիմ:

Զիաւորը կառնէ հաւկիթները, ու անգլիական ոսկի մը կը սահեցնէ գեղջկուհիին ափը: Ոսկիին վրայ Վիկտորիա քաղուհիին սիլուէթը կար:

Այդ ձիաւորը Կապիսի իշխանն էր, հիւսիսային էստրադայի քաղաւորը:

Տրապիզոն

ԵՐ. Մ. ՃԻԻԶԵՐԵԱՆ

Տես կողքիս Բ. էլին վրայ՝ գեղազործ Կիւմուշեան Լեւոն էֆէնտիի ոտանաւոր ծանուցումը:

## Բ Ա Ր Ք Ե Ր

.....

Մեզք ձեզի ո՛վ բժիշկներ, հազար մեզք ձեր այնչափ տարուան աշխատութեան եւ այնչափ նիւթական զոհողութեան, այլ եւս բանի մը չպիտի ծառայէ ձեր հանձարը:

Եթէ մէկու մը մէկ տեղը ցաւի, փոխանակ ձեզի՝ պիտի դիմէ նոր գտնուած դեղի մը որ ձերին տուածներէն շատ աւելի դիւրաւ մարսելի է:

Եթէ կը հետաքրքրուիք այնչափ, գիտնալու համար թէ՛ ի՞նչ է այդ նոր դիւտը, ուրեմն դուք ալ ինծի չափ համբերութիւն ունեցէ՛ք մտիկ ընելու երկու չիք երիտասարդներու խօսակցութիւնը, որ տեղի կուտենայ շոգեհաւի սպասման սրահին մէջ:

— Ա՛ս առտու ածիլուեցար:

— Հա՛, ի՞նչ կայ քի՛:

— Երեսներդ ամբողջ դուրս տուեր է, քիչ մը օ տը քօլօնով լուայիր թող:

— Հայտէ ծօ՛, օ տը քօլօնը ի՞նչ փարա կ'ընէ, ես ան տեղը մէյ մը սիրուհիիս Մաթիլտիս պազցնել տամ նէ բան մը չի մնար:

— Ինծի կեցիր իս եօլ կը սովորեցնես կոր:

Մէյ մըն ալ օրաթերթի մը սիրելի աշխատակիցը Տօթ. Վալանթէն Նալբաս կելլայ կրսէ քի... համբոյրը փնտրակար է:

X

Դրան մը առջեւ երեք չորս կիներու կենալը հաստատ ապացոյց մ'էր որ՝ հոն աղջիկտեսի կամ խօսք կապի արարողութիւն մը տեղի կ'ունենար:

Այդ տունէն ոչ ոք կ'երեւնար, բաց ի դրացի տուներէն՝ որոնց մէն մի պատուհանէն երեքական գլուխ դուրս ցցուած էին:

Բարեկամի մը հետ հոնկէ կ'անցնէինք եւ կ'ունկնդրենք պատահամբ ասոնց խօսակցութեան:

— Ամա, բէք եախըլըլը տղայ էր, հիչ ասոնց կէօրէ բան չի նմանիր կոր...

— Ճանը՛մ, պէրէքէթ վէրսին խալովուզին, ուրկէ ուր ատ տղան ասոնց դուռը պիտի զարնէր...

— Շիտակը ի՞նչ մեղքս պահեմ, կ'ա-

ւելցնէ աղջկան տէր մայր մը — հիչ արունըս չի պւնեց, կիտես քի դուրսէն նոր եկեր էր, հիչ եօլ սըրա չիյտէ կոր, տիխաթ չ'ըրի՞ք արապային սօլ թարաֆը նստեցուցեր էր մարը...

— Ան քու ըսածդ վախիթ մըն էր, հիմա մօտան աստի թառաֆը նստեցնել նէ քի արապաճիին ետեւը չի մնայ...

Էյ պաւփօ տիկին ըսի ինքնիրենս, աղէկ որ այդչափ կենցաղագիտութիւնը սովորէ էք:

Աւելի աղէկ չ'ըլլա՞ր որ փոխանակ ուրիշին աղջիկը կամ տղան քննադատելու, ձեր զաւակաց բարոյական կրթութեան հոգ տանիք, այն ատեն վստահ եղէք որ զանոնք ամուսնացնելու համար առանց ձեր իրար անցումին, թեկնածուներ անձամբ կը ներկայանան ձեզ, որով ձեր ապրանքը սովորականէն շատ աւելի անուշ ծախած կ'ըլլաք:

— Այնպէս չէ՞...

ՆԵՐՇԱՊՈՒՀ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

## Ա Ռ Ե Ղ Մ ՈՒ Ա Մ

Մարմարե արձան մ'իկնչպէս անգգայ,  
Անշարժ կը կեանայ, ջերմեռանդին՝ սուրբ  
Հաւատքին առջեւ, որ կը վերանայ  
Իր մեղմեղեմ վերջ գոջալով ընդհուպ:

Այնպէս ալ դո՛ւն, ո՛վ գոհա՛ր վեհութեան  
Չ'ես յազումիր երբեք սիրոյ երգերես՝  
Որով չի դադրին պիտի յաւիտեան.  
Քեզ սխալելու համար որ սիրես:

Վասերը միայն չ'են սիրեր հոգիս,  
Ձի անոնց արեւն պղծուած կ'ըլլան:  
Պաշտումի աջերդ կը համոզեն զիս,  
Թե դո՛ւն սիրս մ'ունիս սրբութեան խորան:

Բայց առեղծուածն է հո՛ն դեռ անդ՛ւծելի,  
Քու չի սիրելուդ այդ անհուն գաղտնիք՝  
Չոր թերեւս օր մ'ալ ըլլայ կարելի,  
Լուծել այդ գաղտնիքն, պաշտելի պուպրիկ:

ՍՏԵՓԱՆ ԻԱՉՈՒՆԻ

# ԼՕԹԹ ԱՌԻԱ ԲԻԱՆԳՕ՝...

Լօթառիա բիանգօ՝ ... բազար էրթէսի եունու չէքիւօ՝ր ... գազանան ալթի եունգ պին ֆրանք ալթիօ՝ր ... :

Այսպէս կը պօռար տղեկը սեղանաւորի մը կրպակին մօտ, անձրեւէն ու ցուրտէն մուկ կտրած, մինչ նոյն պահուն երկու կիներ բէշերնին քսան եւ հինգական սանթիմ վեր առած Պահչէ-գարուի պողոտայէն կանցնէին շտապաւ:

— Հայտէ չէքիւօր, հայտէ գալմատի պիլէթ ...

— Քա Ուսկուկ, տա լակոտը պան մը կը պօռա կոր, աճապ կնկան բալթօներուն մէջաթը հո՞ս է... մէյ մը հարցունէինք...

— Ամա՛ն դուն ալ, սիկառայի թուղթ է ծախածը ի՞նչ է ...

— Չէ ճանըմ, պաներ մը կը լվըռցունէ կոր, կայնէ տէ մէյ մը հարցունենք, ըսելով տղուն կը մօտենան,

— Ծօ՛, նէտիր օ սաթտըղըն ...

— Բիյանգօ, նա՛ մատամա, բազար էրթէսի եունը չէքիւօր, եէնի մօտա գէնկինլիք պու, ալթը եունգ պին ֆրանք գազաներօսունուգ ...

— Քա քուզում Ուսկուկ, եկուր դուն ալ լսէ, բիանգօ կըսէ կոր, չըմէնտըֆէռ ըլլալու է, սա ուր է տոպրակներով օսկի կը զարնէ կըսեն նէ ...

— Էյ հա՛ կը զարնէ եա՞ ... սանքի առնե՞նք կըսես կոր ...

— Քա ինչո՞ւ չ՛առնենք ... անէքի կը զարնէ կըսէ կոր նէ ...

— Էյ դուն գիտես, առ ... պէլքի ես ալ կառնեմ ...

— Խե՞նթ ես Ուսկուկ, տիւզճէ առ բախթ մընէր քի տէմէրնիս ելաւ ... մէյ մէկ հատ առնենք, էրիկներնուս փարայ ուզեցէն պէրաննիս խուռպաղըճըխներ հանեցինք, կտոր մըն ալ անոնք թող մեզի տայանմիչ ըլլան...

— Քա աղեկ ըսիր, հարցուր նայինք քանի փարայ է մէկ թուղթը ...

— Ծօ՛ խըլէ՛ղ, զա՛ջ գուռուշ տըր ...

— Եէտի պուչուգ մատամա, եէտի պուչուգ ...

— Եա, ծօ՛ եէտքէն չելայ նէ՞ ...

— Աննաշտիռամայօղմ մատամա ...

— Սօղռամտանա չըգմաղ սա՛ ...

— Զարարի հօ՞գ ... եէնէ պուրայա կէօթիւրիւրսինի՞գ ... փարաւարի եէնիյէ վէրիւրիգ ...

— Քա առ աղե՞կ ամա, զօրքին մեռնիմ ան կը հանէ; գէրէ երեք գիշեր առաջ կէսուրոջս էնֆիյէին խուլթին երածա տեսայ, մէջը տոր տօլու օսկիներով ...

— Էյ հատէ փարան տանք տէ լըմըն-նայ ...

— Հա ծօ՛, մէճիտիէին վրան վէր, ըսելով դրամը կը վճարէ, մինչ սեղանաւորը տղուն աչքարացութենէն գոհունակ, գահ գահներով կը գրպանէ դրամը:

— Էյ Ուսկուկ, ես ալ կը մտմտայի կոր քի տունի մը տէր չեմ եղեր տէյի, տեսա՞ր Աստուած ինտո՞ր կուտայ ...

— Հայտէ նայինք իշալլահ երկուքս չիֆթ մը կը տնկենք քով քովի տէ պախճանիս ալ մէկ կընենք, կերթանք կուգանք ...

— Հա ամա գիտե՞ս եա՛, ես քիչ մը պախճայի մէռաքը եմ, անանկ չիչէկներով շտկեմ տէ, դուն ալ ելլաս թափուխներդ սալմա մեր թառաֆը ձգես նէ եանի խըյախ կիւճէնմիչ կըլլամ ...

— Հոգդ մընէր ճանըմ, քիւմէսին էթռաֆը թէլ կը քաշեմ քուրուկ, հայտէ երթաս բարով, գիտնալըս դուն չըմէնտըֆէռն պիտի հասնիս, ես ալ առ գիշեր դիմաց պիտի ասնիմ ...

— Հա՛, մոռցայ ըսելու, չելլաս էրկանըղ ծախքը ձգես փարաներդ, դուն պահէ, մէկիկ մէկիկ խարճէ, անոնք գիտե՞ս եա՛ ֆիլ եուտան են ...

— Ը՛նհ ... մէթալիք չեմ ցուցնէր ... չիլթէիս պուրդերուն մէջը տեղաւորեմ նէ ալի թաղը ըլլայ նէ հտը չառնէր ...

— Էյ բարով խարճես ...

— Լղեկ օրերու ...

Ու կը բաժնուին իրարմէ, գոգցես 600,000 ական ֆրանքնոց չէքը գրպաններն:

Գարեի է այս տողերը ընթերցողներէ ոմանք չընդունին, եւ պնդեն թէ այսչափ միամիտներ կարելի չէ որ գտնուի 20րդ

դարուն մէջ, բայց կը վստահացնեմ զիրենք թէ՛ այս տեսակ տուտուններ կան ու պիտի մնան ցորչափ դտնուին նորեկուկ գրագէտ միւսիւններ որ ասոնց զաւակը ըլլալու պատիւը ունին գոռոզ հովերով:

×

Տեսարանը կ'անցնի Տիկին Նազլըի տունը: Ուշ ատեն, տիկինը տուն հասած, հանուած եւ կերակուրները տաքի դնելէ վերջ փողոցին վրայ նայող սենեկին անկիւնը նըստած է, սպասելով որ ամուսինը գայ:

Քիչ վերջը Մեսրոպ աղա հազարով թըքներով կուգայ զանգակը քաշել:

— Բաթլամիչ ըլլա՞, խմէ խմէ տէ եկուր . . . ամա՞ . . . իչտէ սօնն է, պիտի ազատիմ ծառքէդ . . . ըսելով կեղայ դուռը բանալու:

— Բայրիկուն կընիկ . . . նա՛ տալիս ուղեցիր . . .

— Ասծու բարին ըսելու կը գանիմ կոր. . . սա հալը՛թ նայէ, վրադ կըլսող կիտես քի ծովէն են հաներ . . .

— Քեզի ո՞վ ըսաւ քի Մեսրոպը խուռնային տակէն ելեր եկեր է տէյի . . . դործէն եկողը ասանկ կըլլայ . . .

— Զաթը առապա մը պիտի առնե՞մ եմ՝ . . . նէ իսէ, քու ըռահաթուծենէդ է՝ վէլ, վախտին թէմուզուկ տուն կաս տէյի. . .

— Հէքիմը վե՛րն է կընիկ . . . ի՞նչ եղար ասոր . . . խեր ըլլայ . . .

— Դուն ինքիզինքդ մուայէնէ ըրէ . . . կը տեսնա՛ս դուն Նազլըն . . . բախտաւոր չըլլայիր նէ ինծի էրիկ չէիր ըլլար . . .

— Ծօ՛ տուր պազալըմ, պիր չէյ վա՛ր ամա, չեմ հասկնար կոր . . . Նազլը՞, սանկ լուսին դառցիր նայիմ . . . կըլստէ ցաւըդ. . .

— Մինչեւ հիմա ցաւըս սիրտս էր ամա, Աստուած ողորմեցաւ եօխսա . . .

— Հէլէ սա մայտանոսին տէմէթը մութ վախ տար, թէ ոլիկներս բեր . . . չեմ հասկընար կոր կընիկ, ինծի տող մի հաներ, հէքիմը սէվինտիրմիչ չընենք գիշերով . . .

— Հէքիմը ինքիզինքիդ պէր . . . փառք Աստուծոյ թուրքի պէս եմ, դուն ըսած լախըռտըրիս նայէ . . . սայէէս մարդ պիտի ըլլաս, սամուռ քիւրքը հագնիս քէօլէն նըստիս պիտի . . .

— Ատտեղը խալթ ըրիր, տահա աղեկ է քի ես երթամ քրտինքովս հացս վաստըկիմ, նիթէքիմ սամուռ քիւրքը կսնակս անցունեմ. . .

— Ես պիտի անցունեմ ե՛ս ե՛ս . . . իմ սայէովս պիտի ըլլայ աս պաները . . .

— Նէ խալթ եէօրսըն կընիկ, սարըթմի՞չ ըրիր . . . նամուսըդ կերա՞ր, ի՞նչ խալթ կուտես կոր . . .

— Հէլէ վեր ելիր տէ կը տեսնաս . . . ըսելով այր եւ կին վերի սենեակը կեղան, մինչ Մեսրոպ աղա կատարեալ գանկին մէջ փոթորիկ մը կ'անցունէ: Արդեօք հիւանդութիւն մը եկած էր կնոջը վրայ, արդեօք անպատիւ ճամբայ մը բռնելուն հետեւանօք այսպէս կը խօսէր, արդեօք յիմարութեան շոշորդը կար վրան, վերջապէս գաղաբար մը չի կրցաւ կազմել այն զառանցանքներուն զորս յաջորդաբար կը թափեր Նազլը:

Չերկարելու համար նիւթը, խօսակցութեան շարունակութիւնը կսկսինք ճաշէն վերջ:

Բազմոցին մէկ մէկ անկիւնը նստած են հիմա այր եւ կին, մինչ Մեսրոպ աղա չուարած պիչ պիչ կնոջը աչքերուն մէջ կը նայի սոսկում ենթադրութիւններով:

— Ինծի՛ նայէ Մեսրոպ աղա, վաղը աչճիներուն խախմէն հանդըպէ տէ մեզի վարպետ մը պեր . . .

— Բէք աղեկ մատամըս . . . պերե՛նք. . .

— Դալիթային տունն ալ կնայ տէ էլլի այախը պէսլէմէ մը նայէ . . .

— Գլխուս վրայ մատամըս . . .

— Օռթայի խըզմէթճի մըն ալ պէ՛տք է ամա՞ . . . կեցիր նայինք . . .

— Բէք աղեկ մատամըս . . . , ըսելով ոտքի կեղայ մարդուկը, սա բօթիններս բեր մէյ մը դուրս ելլամ . . .

— Կէնէ ո՞ւր աս վախիթ, ի՞նչ հով փըչեցին քի . . .

— Երթամ էզաճիէն քիչ մը սօլֆաթօ առնեմ տէ գամ, կէս գիշերին ազտըրմիչ ընես նէ, ո՞վ օղրաչմիչ պիտի ըլլայ հետդ. . .

— Քեզի ո՞վ ըսաւ քի հիւանդ եմ տէյի . . . դուն կը տեսնաս, սըտեղը երկուօր մնաց, երկուշաբթի իրիկուն կը խորաթեմ հետդ . . .

— Հա՛ . . . հասկցա՛յ . . . հէլէ սանկ նէֆէս մը առնեմ պէ՛, ճաթէի պիտի մէ-  
ռաքէս, ըսելով կրկին իր անկիւնը կ'անցնի,  
կուահելով թէ վիճակահանութեան վրայ կը  
դառնար խօսակցութիւնը:

— Հարսնիքիս օրը մինչօք Եէնի-խարուի  
տունին մէկ տիրէկը վրադ չի տառցուցիր  
նէ տէմըս չի կայնեցար, նայէ Աստուած ի՞նչ  
ըրաւ . . . հազարներով տուաւ, ամա եաղմա  
եօգ ծառքդ չեմ ի տար . . .

— Կընիկ գործը հասկնանք, զարկա՞ւ  
մի՛ . . . զարնէպիտի մի . . .

— Ես պօշ լախըռտը չեմ ընէր . . .  
իչտէ երկուշաբթի պիտի իշնամ, խուռնտու-  
ռաճիին քովի սառաֆէն ավուճ ավուճ պի-  
տի առնեմ . . .

— Էյ ըսել է քի թուղթը ճէպդ է նազ-  
ւը . . .

— Ատ ալ խօրաթա՞յ է, նօմէռօյեովը ա-  
ռեր նստեր եմ . . .

— Աման տեղէդ մերերար, թամ քսանը  
մէկը համրէ քի ելլայ . . .

— Մեղայ զահէր կօրչկայ էի . . . դուն  
կը տեսնաս, խավուռ խավուռ պիտի պերեմ  
քեզի, տահա դուն էյլէնմիշ եղիր . . .

— Կընիկ, խելքդ տուն բեր, հէմ ալ  
պաշխասիին մըսեր, քեզի տանտինը կը հա-  
նեն . . .

— Հէլպէթ չպիտի ըսեմ, զահէր ըսեմ  
տէ, տիւլման բէյտահ ընեմ հա՞ . . .

— Էյ աղեկ եա թուղթդ ո՞ր է . . .

— Նա՛ իչտէ ծոցս պահեր եմ, հէմ ալ  
ո՛ր նիւմէռօն քի պիրինճի պիտի ելլայ նէ՞,  
ան եմ առեր, էն խօճաման բիանգօն . . .,  
մեղայ անէքի փարայ տուի առի նէ՞, պարէ  
անոր կէօրէ ալ վաստակ մը ընեմ, չէնէ  
զօ՞ռս ի՞նչ էր քի օխտնուկէս զրուշը հանէի  
եազուտիին ավուճը դնէի . . .

— Աստուած շատ քաշել չիտայ նազը . . .  
ամէն բանըդ պակաս էր մէկ խելքդ թամ  
էր, հիմա փառք Աստուծու ան ալ պակսե-  
ցաւ . . .

— Պակսիս տէ վուճուտդ վերնայ հէմէն,  
նայիմ քի կիւվէի պէս ծառքդ քէսէս չի  
խօթէս . . .

— Էյ մատամ . . . ո՞ր պանգան կը ձը-  
գես կոր փարաներդ . . .

— Հա եա՞ . . . պանգան ձգեմ քի իմ  
փարայովո գործ տառցունեն . . . եաղմա  
եօգ . . . խե՛նթն եմ քի ըսեմ . . . չիլթէ-  
ներուս մէջը դրի գնաց . . .

— Աֆէրիմ մատամըս . . . սուռաթէդ  
էվէլ զաթը խելքիդ հաւնած էի քեզի տուի  
նէ . . .

— Հիմա էյլէնմիշ կըլլաս կոր ամա եր-  
կուշաբթիէն անդին պիտի տեսնաս Նազըն,  
ինքիզինքս սիւսի մը պիտի տամ քի՛ . . .  
ալթըխ չայլախ խուշի բալթօնե՞ր մի կըսես,  
գօգոռ չաբխանե՞ր մի՛ . . . մինչօք պալտըր-  
ներս զուլթուի պօթիննե՞ր մի՛ . . . վարտիք-  
ներս պիլէմ իփէքի պիտի չինեմ, զաթէն  
պէրի հավէս ունէի . . .

— Աֆէրիմ մատամըս, հիշ էրկանդ պան  
մը չիգա՞յ . . .

— Իչտէ տուն մը պիտի չինեմ տիպլի  
պուճախը, հէմ ալ պօյճա քիւմէս մը, խո-  
շոր պախճա, չիֆթ մը պէկիր իլէն առապա  
մըն ալ քի վախտին գործիդ երթաս, իրի-  
կունը տունըդ դաս . . .

— Կեցիր նայինք, ըսել է քի ես կէնէ  
խսպիրթօ պիտի փչեմ հա՞ . . . սատէքեա-  
րութեանս տէվա՞մ պիտի ընեմ . . .

— Էյ հապա, բիսիկի պէս տիօր օր ի-  
րինկուն քեզ դէմս առնելու չեմ եա՞ փարա  
ունինք տէյի՛ . . . կէնէ ել գործիդ գնայ . . .

— Էյ հրամանքդ . . .

— Ես պաշխա՛ . . . հէլպէթտէնէ քի  
հագուիմ սքուիմ պօյըս ցցեմ դուրս պիտի  
կյնամ, եա նասը՛ հասկցունեմ պիտի քի  
Նազընին բիանքօ զարկեր է տէյի, թող եր-  
թան տեսնան տէ ճաթին, բաթլամիշ ըլ-  
լան . . .

— Էյ մատամ, տունը նասը պիչիմ պի-  
տի չինես նայինք, ձմեռ գիշեր է, լաֆ մը  
պէ՞տք է եա . . .

— Էյլէնմիշ ըլլաւ կուզէ կոր մէտէդ,  
հա՞, վաղը չօլախ խալֆային մարդ պիտի  
խրկեմ քի բիանթա մը չինէ տէ բերէ . . .

— Գիւմէսը սօլ թառաֆը պիտի ձգես,  
չէնէ մի սաղը . . .

— Հիմա սաղէդ ալ կը պաշխայեմ սօլէդ  
ալ, ան առջի վախտը չէ քի դէմըդ դողա-  
ցունես . . . եաղմա եօգ . . .

— Էյ Նազըն, պարէ եղաւ ըլլալիք . . .

Թագէ էրիկ մըն ալ առ ատ փարային մէջն, ուզած տէլիսանըդ քաշէ քոյըդ առ, ինծի ալ չըրախ կը շանեսա ...

— Աս ալ իմ կիտնալու պանս է ... բէք ալ սուտ չես, հիմա մէյ մը չա՛վ ըլլայ քի Նազըլին թիանքօն զարկեր է տէյինէ՞, երկու տարուան նշանածները պիլէ կը ձգեն կը ձգեն տունս կուգան, Փախա՛տ ... ծածած սիւտս հալիս է եօխսա ...

— Քիւմէսիդ Թավուխներուդ նայող մէկը պէտք է, կընիկ դուրսէն մարդ եվելցընելուդ, ինծի այլըխ մը կապէ տէ ես ալ սէպէպէնմիշ ըլլամ ...

— Չէ չէ, տալու թողը կայ, պօշ կը պտըտի կոր, անոր ըսեմ տէ թող կայ սըտեղը, հէմ այլըխ առնէ հէմ հացս ուտէ, դուն զաթը կը նայուիս ... ես կուգեմ քի տունիս բէնճիրէներէն մէյմէկ կլոխ երեւայ տէ, ըսեն քի Նազըլին տունը ըսպառչա էթվայի կայ տէյի ... փարաները հետս տանելու չեմ ես ... թող երթայ երկու Փուխարէ ինծի տուվա ընէ ...

— Կընիկ չախան մէկդի, համուզուելով կըսես կոր, չէնէ մի էյլէնմիշ կըլլաս կոր ... երէկ գիշեր երած տեսա՞ր աճապ ...

— Երած ալ տեսայ չերած ալ, աս աս է, երկուշարթին օրը ըլլայ տէ քեզի հետ կը խօրաթեմ, կըսէ ու ժամանակն ալ անցած ըլլալով կը քաշուին սենեակնին ու յուսալից քուն մը կառնէ կը տանի մեր Նազըլ տուտուն այն աշխարհը՝ ուր ամէն բան ճոխ ու վառ կ'երեւի:

×

Երկուշարթի առաւօտուն կանուխ Տիկին Նազըլ, ճամբորդութեան պառույ մը բեռնակիրի մը կռնակ տուած շիտակ Պահչէ գաբու կ'ուղղուի որոշեալ գումարը (°) ստանալու համար, միշտ բռնմէսը գրպանը: Հազիւ խանութին մօտեցած թէ չէ, անդիէն Տիկին Ուսկուկ հետը բանկտուղ տղայ մը առած, ինքն ալ կը մօտենայ ու ալ երկուքը մէկ դրամատունէն պատրաստ դրամ քաշելու պէս վստահ կսկսին չաղակրատել:

— Էյ բարիլուս դայ վրադ քուրուկ, կիտեմ քի աս մէկ երկու օրը տարիներ եղան ...

— Սուս, սուս, սիրտհատնումը մէկ թա-

ռաֆէն, էրկանըս բապուճի խըտար լեզուն մէկալ Թառաֆէն, ալթըխ կա՞յ եա՛ ... իրկներս քաղուեցաւ ...

— Կիտինին տիպը ասնին, իմ կլխաւորս ալ ատ խալթը կերաւ, ամա՞ հախտինը դըրի, հէմ ըսի քի, տահա լեզուիդ տալու ըլլաս նէ, սօլուխս շիտակ Պատրիարքարան կ'առնեմ տէյի, ատոր վրայ բուֆ պէօրէկի պէս սըմքեցաւ, էյ ինչո՞ւս պէտք, կիւլպէչէքէրի պէս կը սիրէ հիմա Աստուծու համար ...

— Քա կեցիր նայինք, եավուտին տղան չեմ տեսնար կոր ...

— Իշտէ սառֆին խանութը, ներս մըտիր տէ հարցունենք ...

Ու երկու երեւակայական հարուստները ներս կը մտնեն կրպակէն:

— Բարիլուս դայ վրադ, քիչ մը աճէլէ ըրինք կանուխ եկա՞նք ամա, պէտք ունինք տէ ան է, ամէն տարի տիպէս Փանէլա վարտիք կը հագնիմ, իշտէ աս փարային մէջն առնեմ տէ պաճախներովս տաղնամ ըսի ...

Մարդուկը որ մոռցած էր այս պատմութիւնը, ի՞նչ կայ տիկիններ, ընէհինով փառա՞յ կուզէք կոր ...

— Եաղմա չիգայ, փարաները համրելու է ... իշտէ նօմէոսներնիս ...

— Հա՛ ... բռնմէս ... էյ տահա չի քաշուեցաւ ...

— Մեղայ քէթէ՞ն էր քի քաշուէր, իշտէ տղան ըսաւ քի, երկուշարթի աս թուղթերը պերէք փարանիդ առէք տէյի, Ուսկուկը համալ է պերեր, ես ալ պաուլըս պերի ...

Դիտելու արժանի էր սեղանաւորին գահ գահը:

— Մօրըդ չալվարին վրայ խնտայ ... փարաները ...

— Մատամ, ասոնք բաղդի տոմսակներ են, տեսնենք հիմա նիւմէոսները կը բերեն, եթէ բան մը զարկած է, կը վճարենք ...

— Կընիկ ենք տէյի մեզ պիտի խալիե՞ս հա՛ ... չի տալու ըլլաս նէ, տաքըս ապուգաթ է խապա՞ր ես ...

— Հարկ չիկայ տիկին, մէկ ժամէն պատասխանը կուտամ ըսելով կը համոզէ սա երկու տիկինները, ժամու մը չափ կը սըքտըկան պաուլը ձեռքերնին:

×

— Հայտէ նայինք իշալահ եկաւ նիւմէ-  
ռօները ...

— Այո տիկին, տեսնա՞մ... 1,465,786...  
չիգայ ... ձերը տիկին, 168,478 ... չի-  
գայ ... գալ անգամ ...

— ՀԱՄՄԷ՞ ...

— Ի՞նչ ընեմ տիկին բազդ չունիք ե-  
ղէր ...

— Բազդ չունենալըս, զաթը Մեսրոպին  
հետ կարգուելէս պէլի էր ամա, քսան տա-  
րի վրայէն անցաւ նէ պէլքի պացուեցաւ  
ըսի ...

— Քա կիւզէիւմ պախճաս չպիտի կըր-  
նամ չիներ ըսել է քի ...

— Հապա քիւմէսը՞ս, թավուխները՞ս,  
տալըջս թողը՞ ...

— Հիմա խելքիս կուգայ, քուզում սա-  
ռաֆ աղասի, աճապա ատ լիտտաին մէջի  
նիւմէռօները փոխես տէ մեզի մահրում չի  
հանես նէ չըլար ... Թախ հեռուներէն  
կուգամ կոր ...

— Ձեր բազդէն տիկին, ի՞նչ ընեմ ...

— Վա՛խ վա՛խ վա՛խ, ծունը թէփէյիս...  
մահման քրտինքները մտայ ...

Ու երբ արցունքոտ աչքերով խանութէն  
դուրս կելլային մեկնելու համար,

— Քա համարը ...

— Քա պաուրս ...

— Նրկու աշունիդ քէօռնայ քի սէպէպ  
եղաք տէ չամաշիրէս մնացի ասոր ...

— Բսխեր եմ մէջը, ձէհէգիս պաւուր  
կողցուցի ... :

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

Վարժարանին մէջ .

— Տղաս, հայրիկիդ ըսէ ամա-  
կանը զրկէ .

— Հայրիկըս ըսաւ քի, վարժա-  
պետիդ բարեւ ըրէ աս ամիս մամայիդ  
շաբխան շինեցինք գալ ամիս պիտի  
տամ :



## ՏԱՐԵՑՈՅՑ

ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ

1906 Բ. ՏԱՐԻ

Յառաջիկայ շաբթու Նշան-Պապիկեան  
գրատունը հրապարակ կը հանէ իր  
ՏԱՐԵՑՈՅՑԸ, որուն 1905 Ա. Տարին  
ա՛յնքան փայլուն յաջողութիւն գտաւ՝  
ո՛րքան կ'արժէր :

Մեր մատենագրական անապատին  
մէջ հեշտին ու գեղագոյն ովասիսը կը  
կազմէ այս Տարեցոյցը, ուր մեր տոհ-  
մին ամենէն աւելի սիրուած ու ամենէն  
հմուտ գրողները հաւաքուած են՝ ի-  
րենց ընթերցողները և ընթերցուհիներ-  
ը չը ձանձրացնելու հաստատ առա-  
ջադրութեամբ — և ա՛յս է արդէն  
կարեւորագոյնը — : Մեծ ու պզտիկ  
խօսքերը, մտացի ու անմիտ խօսքերը,  
համով ու անհամ խօսքերը, բոլոր ա-  
սոնք իրենց հետ բերելով մեր լաւա-  
գոյն գրագէտներուն ալ խօսքերը,  
խմբուած են ու դասաւորուած միշտ  
սիրուն, միշտ անակընկալ, մի՛շտ ան-  
համեմատ պէսպիսութիւնով մը :

Տարեցոյցին գլխաւոր հրապոյրներ-  
ընէն մէկն ալ աշխատակիցներուն ամե-  
նագեղեցիկ լուսանկարներն են՝ որոնց  
քիչէները յատկապէս Վիէննա պատ-  
րաստուած ու տպուած են, կրասէ թուղ-  
թի վրայ :

Նշան-Պապիկեան գրատունը, — ու  
երաշխաւորը Հանրագիտակ է — 20 օսկիի  
մրցանակ մը կը խոստանայ անոր՝ որ  
Նշան-Պապիկեան ՏԱՐԵՑՈՅՑԸ կարդալէ  
յետոյ կարենայ ըսել թէ՛ ձանձրա-  
ցած է բոպէ մը գոնէ :

Տուէ՛ք Յ զրուշը և կարդացէ՛ք  
Նշան-Պապիկեան

ՏԱՐԵՑՈՅՑԸ :

## ԽՈՋԱՐԱՐԱՆԱՆ ՔՐՈՆԻԿ

Ճարոնական. եաթօրա

Առէք 100 տրամ ճերմակ կարագ լաւ տեսակէն, դրէք մաքուր ամանի մը մէջ, ու հոն կարագը իր վիճակին մէջ լաւ մը զարկէք մինչեւ որ մածուծիկ վիճակի մը հասնի: Աւելցուցէք 100 տրամ սեր եւ կէս գաւաթ ալ կաթ, ինչպէս նաեւ գաւաթ ու կէս մաղուած շաքար, եւ այս ամէնքը լաւ մը զարկէք, մինչեւ որ ամէնքը միասին խառնուին, յետոյ մասնաւոր թիթեղէ խողովակի մը մէջ լեցուցէք այս բաղադրութիւնը, պայմանաւ որ խողովակին վարի մասը ծակոտկէն ըլլայ, յետոյ վերէն ամուր մը սեղմեցէք, պիտի տեսնաք որ պատրաստուած անուշեղէնը ճիշդ մաքառօնիի պէս պնակին մէջ պիտի թափի:

Ճարոնական այս ասորթահամ անուշեղէնը հրամցուած ատեն, լաւ է որ թիթեղէ խողովակէն դուրս պոսթկացածները խառն ի խուռն պտըտցնէք ճիշդ մաքառօնիի պատրանքը տալու համար, եւ թէ քիչ մը շաքար առանց ջուրի հալեցնելով, մէջը նուշի բարակ կոտրտուք խառնէք եւ իբր սօս վրան անցնել, մաքառօնիէն բնաւ տարբերութիւն չունենար տեսքով, եւ ուտուածքէն աւելի սեղանակիցներուն սիրուն անակընկալ մը կ'ըլլայ:

Ամերիկեան բօնս.

100 ընկուզը ստըկելէ վերջ լաւ մը ծեծեցէք, եւ ատոր մէջ խառնեցէք գաւաթ մը շաքարի փոշի, կէս գաւաթ լաւ քօնեաք եւ այս խմորը լաւ մը խառնեցէք, մինչեւ որ նիւթերը իրար խառնուին, յետոյ ամանի մը մէջ դնելով փուռը տուէք, տասը վայրկեանէն կ'ունենաք համեղ անուշեղէն մը եւ թէ ածան:

Տեսակ մը ձու հաց իւղ (ծուածեղ)

Ճիշդ հին օրէնք ձու հաց իւղին պէս, նախ հացերը կտրեցէք, բայց շերտերը կտր կտր բոլորտիքէն կեղեւը հանելու է, քիչ մը կաթի մէջ թաթխելով զրէք որ մնայ, յետոյ 8 հաւկիթը կտրելով, դեղինը ճերմա-

կէն զատեցէք, յետոյ ճերմակը լաւ մը զարկէք, մինչեւ որ փրփրի եւ թանձրանայ, ատոր մէջ խառնեցէք զատուած դեղին մասը, վերջէն հացերուն երկու կողմը լաւ մը թաթխելով տաք իւղին մէջ նետեցէք, բայց պայմանաւ որ շատ չի դեղնի ու չայրի, յետոյ կտրած շաքարին մէջ մէկ անգամ թաթխել հանելով, կունենաք՝ ձու հաց իւղը ձեր գիտցածէն եւ կերածէն շատ տարբեր վիճակի մը մէջ:

Ճերմակ սօս.

Առէք կէս քաշ կաթ եւ լաւ մը եփելէ վերջ պեղցուքէք 50 տրամ առաջնակարգ ալիւր, 50 տրամ կարագ իւղ, ասոնք լաւ մը խառնելէ վերջ դրէք մաղմաղ կրակին որ եփի: Այս խառնուրդը թանձրանալէն վերջ կրնաք մաքառօնիի եւ ուրիշ նմանօրինակ կերակուրներու վրայ անցնել: Կրնաք նաեւ աւելցնել մէկ հաւկիթին դեղնուցը:

ՍՐՐՈՒՀԻ ՊԵՅՅԻՒԲԱՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

ՊԵՐԿՅԵԶԱՐ

XXXXXXXXXXXX

Ծանօթ երաժշտագէտ Գրիգոր Էփ. Չուհաբան՝ որ ասկէ առաջ Պերկիզադըմ առնունով արեւելեան եղանակներու ձայնազրեալ տետրակ մը հրատարակած էր, այս անգամ հրապարակ հանեց նոյն գործին Բ. տետրը եւս՝ ճօխ և մաքուր տպագրութեամբ:

Հեղինակին այս գործը կը յանձնարարենք ամէն երաժշտասէրներու և մասնաւորապէս ամէն անոնց՝ որոնք կը փափաքին սորվիլ և վարժուիլ նօթայի և շարգիներու:

Մէն մի պրակի գինն է 3 զրշ. կը գտնուի Պապը-Ալի ճատտէսի Ասըր գրատունը՝ ինչպէս նաեւ բոլոր գրաւաճառներու քով:



# ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Տրապիզոնէն մեզ կը գրեն թէ՝ սարգի նորաձեւութիւնները փորձելու համար կարգ մը օրիորդներ մաղերնին վեր սոթած տիկինի հովեր առած են : (Կը խնդրենք որ լաւ պատասպանութիւն որ չեղան . . . պապին Ծ. Խ.) :

— Բերայի մեր մասնաւոր թղթակցէն կը տեղեկանանք թէ՝ ամուսնացաւ օրիորդ մը իր իւղաներկի մէջ ունեցած կարողութիւնը ապացուցանելու համար իր պատկերը հայելին մէջ նայելով գծագրեր և նշանածին նուիրեր է : (Անշուշտ իւղաներկի փորձերը հայելին մէջ դէմքին վրայ կատարած է . . . Ծ. Խ.) :

— Սկիւտարէն մեզ լուր կուտան թէ՝ կերութեամբ մեղմաբար օք, անցեալ իրիկուն վերջին շոգենաւով երկու փուլով տուն բերած ատեն վարպետորդի մը զանոնք սխալ հասցէ յանձնած է : (Չորպան համոզվ էր. Ծ. Խ.) :

— Նոյն գիւղի օրիորդներէն ումանք, նկատելով որ արդի ամուսնութիւնները առանց պիպիլի կարելի չէ կնքել, որոշեցին են մէկ մէկ պալ խապաղի ծակել և մէջը դրամ հաւաքել : (Անշուշտ մինչեւ որ պալ խապաղին լենայ տարիքնին ալ թաշմիշ պիտի ըլլայ այս հաշուով . . . Ծ. Խ.) :

— Լանկաէն մեզ կը գրեն թէ՝ անցեալ գիշերուան պատահած հրդեհին, կին մը փոխանակ արժէքաւոր առարկայ մը փախցնելու, շուարումէն չօճուլին շորը փնտռողքի ելեր էր :

— Պանտրմայէն մեզ կը գրեն թէ՝ վարժարանին նախորդ Տնօրէնը՝ որ այժմ քաղաքիս մէջ վաճառականու-

թեամբ կ'ըզբաղի, իր փափուկ պաշտօնը ձգելէն ի վեր մեյխսմեքու ֆոշեմ օղիաճնկեւաբանութեամբ զբաղելէն բան մը չը կրնալով հասկնալ, կը հարցնենք Հանրագիտակի Պատ. Խմբագրութեան թէ՝ ասիկա ինչի՞ վերագրելու ենք : (Թաւաճանճեան մրցանակին. Ծ. Խ.) :

— Էտինճիկ առժամանակեայ կեցող՝ Պրուսայի Կառսակ գիւղէն եկած քահանան, իր տունը եկեղեցւոյ դուր-գերով զարդարած ըլլալուն, կը խնդրուի սոյն եկեղեցականէն որ, հիմայ գիւղէս մեկնելու ժամանակ այդ ինչքերը հետը բերած կարծելով՝ Կառսակ չ'տանի :

— Գատը գիւղէն կ'իմանանք թէ՝ անցեալ իրիկուն այր և կին վիզիթի գացած ատեննին, տիկնոջ մեկուն վերայ, միւսին իր խառթալ խուշի կըրկնոցը մատամին վրայ է տուեր, նկատելով որ օրուան նուրթին կը վերցնէ : (Այս հաշուով բանթալօններն ալ պիտի յարմարին. Ծ. Խ.) :

— Գում գաբուէն մեզ կը գրեն թէ՝ տեղւոյն եկեղեցական երգեցողութեանց ներդաշնակ քաղցրութիւնէն անցեալ կիրակի առաւօտ նոր հարսի մը վրայ մարելիք է եկեր . . . (Հապաքառաձայն է՞ն ինչ պիտի ըլլան արդեօք : Ծ. Խ.) :

— Վերջին անգամ պատրաստուած դրական ստաթիսթիքի մը նայելով (անու-նովը չըլլայ) երգիծաբան (՞) մը 140 յօդուածի մէջ 280 անգամ ինքզինքը գովեր և իր վրայ միայն խօսեր է . . . (Կարծենք թէ խեղճը ուրիշ զուարճալի նիւթեր չի գտնուելուն, իր անձը ճուռ-ճինաի է դրած . . . Ծ. Խ.) :

Արսունսկր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը այլ ճատտեսի, քիւ 52



# BOVININE

## ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԻ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ սննդային մասերն եղան մին, ուղեղին, ողնուղիղին և ֆոսֆորներն ուղեղային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պարսկ նոր բերուած այս անզուգական կազդուորիչ գեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, դալկութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջղային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահէ-գարու, յամանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և դեղօրէից միջերանոցներու քով:

50—17

## ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

### ԶԱՆՊԵՐՁԵԶՆԱՅ

Արանց, Կանանց և Տղայոց

ՊԻՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

## Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Հասան, Թօփաշեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուադէպ, կանանց րեզորիներու և տղայոց շիք և դիմացկուն փոքրիկներու ճոխ միջերք մը պատրաստ ունի, որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուադէպ և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 50—12

## ԶՈՒԿԸ ԾՈՎԷՆ ԴՈՒՐՍ

Կազմով վատաւոր, չիղերով տկար Մեծ ու փոքրերուն յաւետ օգտակար. Բուժիչ, կազդուորիչ դեղ մը անուանի Երեկայ՝ ձրկան գուտ իւղն է անի: Եւ հրաշագործ այդ ձուկն է Մօրիւն իր իւղն քմադրը կ'ստանայ տախն. Կուտայ ախորժակ, ոյժ, քուն, եւ իսկոյն Կարմըրին ալտեր խնձորի հանգոյն: — Բայց աւա՛ղ որ իւղին այդ Մօրիւն ձրկան Անխարդախը հոս ծախողներ քիչ կան... Լաւագոյն տեսակն անոր, քաղցրահամ, Ծուխի եզրերէն շիտակ, այս անգամ Բերեյ տուած է Հեռն Գիւմիւշեան, Որ՝ քնքացքին մէջ մօտակայ ձմրան իր դեղարանի յաճախորդք ամեն Ուզածնուն չափ գան, առնեն ու խըմեն: Եւ — ինչպէս ամրան հեղձուցիչ տաքուն «Միջատասպան»ով զըտած տնուշ քուն, — Զմրան ցրտաշունչ խիստ օրերուն ալ Կարենան առողջ կենցաղ ունենալ, Եւ միշտ ստիպուին շիտակ դիմելու: Առ 1. ԿԻՄԻՆԵՆԱՆ, ի Զարչը Դաբու:

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ե Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ



# Հ Է Ր Ճ Ա Յ Ի

## ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօաֆիէներ, ամերիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

### Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՁՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-8

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։